ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

Հումանիտար առարկաների առարկայական մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի մայիսի 29-ին:
Նիստին մասնակցել են հումանիտար առարկաների առարկայական մասնախմբի բոլոր անդամները:

Օրակարգում՝

1. Նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյան)
2. Նախորդ նիստի որոշումների կատարման մասին մասնախմբի ղեկավարի զեկուցում
3. Հաշվետվությունների նոր ձևաչափի ներկայացում (զեկուցող՝ մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյան)
4. Առարկայական ծրագրերի կատարողականի քննարկում (զեկուցող՝ մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյան)
5. Թեմատիկ պլաններում օրվա դասի նպատակի և վերջնարդյունքի վերանայում (զեկուցող՝ մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյան)
6. 7-րդ Բ դասարանում հայրենագիտություն առարկայից «Ազգային խոհանոց» անվանումով նախագծային աշխատանքի արդյունավետության քննարկում (զեկուցող՝ մասնախմբի անդամ Ռ. Բաղդասարյան):

Լսեցին՝

1. Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանը ներկայացրեց մայիսի 29-ի նիստի օրակարգը՝ բաղկացած 6 հարցից:

Լսեցին՝

2. Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանը զեկուցեց նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ՝ նշելով, որ իրականացվել են սովորողների ԱՈՒՊ-ների երկամսյա քննարկումները և լրացվել համապատասխան արձանագրության ձևերը: Անդրադարձ է կատարվել սովորողների ձեռքբերումներին, առկա բացթողումներին և նախապես սահմանված նպատակների իրականացման աստիճանին՝ ապահովելով պատրաստվածություն ԱՈՒՊ-ների տարեվերջյան ամփոփման գործընթացին և ծնողներին հետադարձ կապի տրամադրման արդյունավետ կազմակերպմանը: Նշվեց նաև, որ մասնախմբի դասղեկների կողմից շարունակվել է բացակայությունների վերահսկումը, և մայիսի 22-ի դրությամբ սահմանաչափը գերազանցող բացակայություններ չեն արձանագրվել: Միաժամանակ կազմակերպվել և անցկացվել է «Վերջին դաս» միջոցառումը՝ ապահովելով սովորողների և ուսուցիչների ակտիվ մասնակցությունը:

Լսեցին՝

3. Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանը ներկայացրեց լրամշակված հաշվետվությունների ձևաչափը՝ անդրադառնալով դրա կառուցվածքին, լրացման կարգին և ներկայացվող տեղեկատվության հիմնական պահանջներին: Ուսուցիչներին տվեց պարզաբանումներ բաժինների բովանդակության, փաստերի և արդյունքների հիմնավորված ներկայացման վերաբերյալ: Նշեց, որ նոր ձևաչափը հնարավորություն է տալիս առավել հստակ արտացոլել իրականացված աշխատանքները, ձեռքբերումները, դժվարությունները և հետագա անելիքները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց հաշվետվությունները կազմել սահմանված ձևաչափին և ժամկետներին համապատասխան:

Լսեցին՝

4. Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանը ներկայացրեց առարկայական ծրագրերի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը՝ նշելով, որ ուսումնական տարվա ընթացքում ծրագրային նյութը իրականացվել է ըստ թեմատիկ պլանների: Նշվեց, որ տոնական և ոչ աշխատանքային օրերի պատճառով առաջացած բացթողումները լրացվել են պահուստային ժամերի հաշվին, իսկ այն դասարաններում, որտեղ պահուստային ժամերը բավարար չեն եղել՝ իրականացվել է թեմաների խտացում՝ ապահովելով ուսումնական ծրագրի տարեվերջյան 100% կատարողականը:

Լսեցին՝

5. Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանը ներկայացրեց, որ տնօրենի ժ/պ Ա. Գարեգինյանի առաջարկով թեմատիկ պլաններում պետք է վերանայվեն օրվա դասի նպատակ և վերջնարդյունք բաժինները՝ լավարկման նպատակով:

Լսեցին՝

6. Հումանիտար առարկաների մասնախմբի անդամ Ռ. Բաղդասարյանը ներկայացրեց, որ ավարտվել է 7-րդ Բ դասարանում «Հայրենագիտություն» առարկայից նախագծային աշխատանքի իրականացումը: Նախագծի նպատակն էր ձևավորել պատկերացում խոհանոցային միջավայրի աշխատանքային գործիքների մասին, սովորեցնել մթերքների պահպանման և օգտագործման ձևերը, խթանել ինքնուրույնության և համագործակցության ձևավորումը: Վերջնարդյունքում սովորողները կարողացան տարբերակել այն մթերքները, որոնք օգտագործվում են հայկական ազգային խոհանոցի նշված կերակրատեսակները պատրաստելիս: Որպես արտադրանք (պրոդուկտ) սովորողները ընտրեցին և պաստառին փակցրին ազգային խոհանոցի նկարները:

Որոշում է

1. Հաստատել հումանիտար առարկաների առարկայական մասնախմբի 2026 թվականի մայիսի 29-ի նիստի օրակարգը:
2. Ի գիտություն ընդունել հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանի կողմից նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը՝ արձանագրելով, որ իրականացվել են սովորողների ԱՈՒՊ-ների երկամսյա քննարկումները, լրացվել են համապատասխան արձանագրությունները, ամփոփվել են սովորողների ձեռքբերումներն ու բացթողումները, շարունակվել է բացակայությունների վերահսկումը՝ առանց սահմանաչափը գերազանցող դեպքերի արձանագրման, ինչպես նաև պատշաճ կազմակերպվել և անցկացվել է «Վերջին դաս» միջոցառումը:
3. Ի գիտություն ընդունել հաշվետվությունների նոր ձևաչափի վերաբերյալ տեղեկատվությունը, հանձնարարել մանկավարժներին հաշվետվությունները ներկայացնել սահմանված նոր ձևաչափով: Անհրաժեշտության դեպքում կազմակերպել խորհրդատվություն և մեթոդական աջակցություն:
4. Առարկայական ծրագրերի կատարման ընթացքի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն՝ արձանագրելով, որ ծրագրային նյութը իրականացվել է ըստ թեմատիկ պլանների, տոնական և ոչ աշխատանքային օրերի պատճառով առաջացած բացթողումները լրացվել են պահուստային ժամերի հաշվին, իսկ

անհրաժեշտության դեպքում թեմաների խտացման միջոցով ապահովվել է ուսումնական ծրագրերի տարեվերջյան 100% կատարողականը:

5. Հանձնարարել բոլոր մանկավարժներին վերանայել թեմատիկ պլանները՝ հստակ ձևակերպելով օրվա դասի նպատակը և ակնկալվող վերջնարդյունքները:
6. 7-րդ Բ դասարանում «Հայրենագիտություն» առարկայից նախագծային աշխատանքը համարել արդյունավետ: Ուսումնական նախագծի վերաբերյալ գրավոր հաշվետվությունը ներկայացնել տնօրենին, իսկ պլանը և արդյունքը (պրոդուկտ)՝ էլեկտրոնային կառավարման և դասավանդման մասնագետին՝ պաշարների շտեմարանում տեղադրելու նպատակով:

Առարկայական մասնախմբի ղեկավար՝ **Հ. Փիրումյան**

Քարտուղար՝ **Ա. Օհանյան**

03.06.2026